և Ջ. Կլոուսոնը առաջ են քաշել մի հիպոթեզ, ըստ որի հուշարձանների ստեղծողները ոչ թե ղփչաղախոս հայերն էին, այլ հայերի կողմից քրիստոնյա դարձված ղփչաղները (պոլովցիները)։ Այդ կապակցությամբ Ա. Ն. Գարկավեցը իր բազմաթիվ աշխատություններում հետևողականորեն օգտագործում է իր հնարած «Հայ-ղփչաղներ» տերմինը։ XVI—XVII դդ. սկզբնաղբյուրների մանրամասնին քննությունը ցույց է տալիս, որ թե՛ Ջ. Կլոուսոնի և թե՛ Ա. Գարկավեցի դատողությունները լիովին կտրված են սկզբնաղբյուրներից, որոնց մեջ ամենևին չեն հիշատակված «Հայ-ղփչաղները»։ Այդուհանդերձ, վերջին ժամանակներս այդ հիպոթեզը ներկայացվում է որպես ապացուցված փաստ։ Այսպես, Ա. Գարկավեցը առանց հիմնավորման գրում է, որ այդ ղփչաղները հայերի կողմից քրիստոնեության են բերվել X դարում (Նա նույնիսկ նշում է որոշակի թվական՝ 965)։ Սկզբնաղբյուրներից բերված քաղվածքներում ամենուրեք նա հայ կամ հայեր բառերը դարձնում է հայ-ղփչաղ կամ հայ-ղփչաղներ։

Հենվելով պահպանված բազմաթիվ սկզբնաղբյուրների վրա, հեղինակը ցույց է տալիս, որ «Հայ-ղփչաղների» մասին Ջ. Կլոուսոնի և Ա. Գարկավեցի հիպոթեզը հնարովի, կեղծիքների վրա խարսխված տեսություն է, որը չի կարող դիմանալ որևէ քննադատության։ XV—XVII դդ. բազմաթիվ հեղինակներ, որոնք գրել են լեհահայ գաղութներում եղած լեզվական կացության վերաբերյալ, վկայում են, որ երկար տարիներ Ղրիմում ապրելով ղփչաղների մեջ, հայերը սովորել էին նրանց լեզուն և Ուկրաինա գաղթելուց հետո շարունակում էին խոսել ղփչաղերեն։ Սկսած XVI դ. 20—30-ական թվականներից այդ լեզվի համար օգտագործելով հայերեն տառերը, նրանք ստեղծեցին բազմաժանր գրականություն։ Ղփչաղախոս հայերի հետ միասին այդ գաղութներում ապրում էին հայախոս, իսկ հետագայում լեհախոս հայեր, որոնք բոլորը միևնույն՝ հայկական համայնքի անդամներ էին։

Հոդվածում հանգամանորեն քննարկված են վերոհիշյալ հարցերը. բազմաթիվ փաստերով ցույց է տրվում, որ ոչ մի հիմք չկա խոսելու իրականության մեջ գոյություն չունեցած «Հայ-ղփչաղների» մասին, իսկ ինչ վերաբերում է հայատառ-ղփչաղերեն գրված նյութերին, ապա դրանք իրավամբ համարվում են հայ ժողովրդի կուլտուրական ժառանգությունը։

Y. R. DACHKEVITCH (Lvov)

QUI SONT LES „ARMENIENS—KIPTCHAKS": DE LA NATIONALITE DES REDACTEURS DES MANUSCRITS KIPTCHAKS ECRITS EN LETTRES ARMENIENNES AUX XVIe—XVIIe SIECLES

Résumé

Les documents en langue kiptchak écrits en lettres arméniennes occupent une place importante dans l'héritage manuscrit des Arméniens d'Ukraine et de Pologne. Depuis deux cents ans environ, les linguistes et les historiens pousuivent l'étude des manuscrits qui nous sont parvenus dans cette langue. Aux années 1970, les linguistes A. Garkavets et G. Clauson avancèrent une hypothèse, selon laquelle les auteurs de ces